ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ Լոռու մարզպետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար մարզային նշանակության ավտոճանապարհների ընթացիկ և ձմեռային պահպանման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀԼՄ-ՀԲՄԱՇՁԲ-22/02» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2021 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված N ՀՀԼՄ-ՀԲՄԱՇՁԲ-22/02-2 պայմանագրում 2024 թվականի փետրվարի 2-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝ Պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների հատկացում:

Փոփոխության նկարագրություն՝ ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 2323-Ն որոշմամբ «ՀՀԼՄ-ՀԲՄԱՇՁԲ-22/02-2» ծածկագրով պայմանագրի կատարման համար հատկացվել են ֆինանսական միջոցներ և պայմանագրի 7.14 կետի համաձայն 02.02.24թ. կնքվել է համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 15-ի 6-րդ կետ:

Պատվիրատու՝ ՀՀ Լոռու մարզպետարան:

Պ ատվ ի ր ա՝ ՀՀ Լ ո ռ ո ւ  մ ար զ պ ե տ ար ան

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ NՀՀԼՄ-ՀԲՄԱՇՁԲ-22/02-2-2024

ՀՀ Լոռու մարզի՝ Սպիտակի տարածաշրջանի, մարզային նշանակության ավտոճանապարհների՝ ընթացիկ, ձմեռային պահպանման և շահագործման աշխատանքների գնման

ք. Վանաձոր

02 փետրվարի 2024թ.

ՀՀ Լոռու մարզպետարանն, ի դեմս գլխավոր քարտուղար Կ.Աշրաֆյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա /այսուհետև՝ Պատվիրատու/, մի կողմից և «Ճանապարհ» ՓԲԸ -ն, ի դեմս տնօրեն Մ.Արղամանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, /այսուհետև՝ Կապալառու/, մյուս կողմից, հիմք ընդունելով 30 դեկտեմբերի 2021թ. կնքված N ՀՀԼՄ-ՀԲՄԱՇՁԲ-22/02-2 գլխավոր պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր), ինչպես նաև ՀՀ կառավարության 10.12.2020թ. թիվ 2045 որոշումը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը.

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն համաձայնագրով սահմանված կարգով Պատվիրատուի կամ նրա կողմից որոշված Ստացողի հանձնարարությամբ կատարել Պայմանագրի N1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով և ըստ կցվող 2024թ. սպասարկման ենթակա ավտոճանապարհների ցանկով նախատեսված՝ ՀՀ Լոռու մարզի՝ Սպիտակի տարածաշրջանի, մարզային /տեղական/ նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման ու շահագործման աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն համաձայնագրի N1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վարձատրել դրա համար:

1.2 Աշխատանքների հանձնում-ընդունումը կատարվում է Պայմանագրով սահմանված կարգի պահանջներին համապատասխան:

1.3 Սույն համաձայնագրով սահմանված պարտավորությունները տարածվում են 2024 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա և գործում են մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ՝ հանդիսանալով Պայմանագրի անբաժանելի մաս:

2. Աշխատանքի կատարման պայմանները

2.1 Աշխատանքի արդյունքը հանձնվում է Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին:

3. Համաձայնագրի գինը և վճարման կարգը.

3.1. Սույն համաձայնագրով Կապալառուի կողմից կատարված Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 48 351 700.0 (քառասունութ միլիոն երեք հարյուր հիսունմեկ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Աշխատանքի գինը ներկայացված է սույն համաձայնագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածում: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

3.2. Պատվիրատուն իր համաձայնությամբ կատարված Աշխատանքի դիմաց վճարում է Պայմանագրով նախատեսված կարգով՝ սույն համաձայնագրի N2 հավելվածին՝ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցին համապատասխան:

3.3 Կատարողը պարտավոր է ապահովել ճանապարհային կահավորանքի, այդ թվում՝ նաև արգելափակոցների, վնասման դեպքերի հաշվառումը և ճանապարհային կահավորանքին պատճառված վնասների վերականգնումը՝ համաձայն 2010 թվականի նոյեմբերի 4-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ աղյուսակով սահմանված պահանջների:

3.4 Կատարողը սույն համաձայնագրի 3.5 կետով սահմանված՝ ճանապարհային կահավորանքին պատճառված վնասի վերականգնման համար կարող է փոխհատուցում պահանջել վնաս պատճառող ֆիզիկական կամ իրավաբանական անձից (այդ թվում՝ ապահովագրական ընկերությունից):

4. Այլ պայմաններ.

4.1. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, Աշխատանքի հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

4.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

4.3. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N1, N 2 հավելվածները և սպասարկման ենթակա ա/ճանապարհների ցանկը բաղկացած են 4 թերթից և հանդիսանում են համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու
ՀՀ Լոռու մարզպետարան
ք. Վանաձոր, Հայքի հրապարակ
ՀՎՀՀ 06930769
ՀՀ 900231671026
ՀՀ ՖՆ գանձապետ. համակարգ

_______________ Կ.Աշրաֆյան
Կ.Տ

Կապալառու
«Ճանապարհ» ՓԲԸ
ք.Սպիտակ, Տեր-Սիմոնյան 3
ՀՎՀՀ 06800233
Հ/Հ 1930009058700100
«Կոնվերսբանկ» ՓԲԸ , Վանաձորի մ/ճ

_______________ Մ.Արղամանյան
Կ.Տ

Հավելված 2
«  02  » փետրվարի 2024թ.
Կնքված N ԼՄ-ՇՀԱՇՁԲ-16/01-2-2024 համաձայնագրի

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հազ.դրամ

| Ձեռք բերվող ապրանքի աշխատանքի, ծառայության անվանումը | Ընդ. տարե-կան | Նախատեսվում է ֆինանսավորել 2024թ ՀՀ. պետ բյուջեից, ընդ. 48351.7 հազ.դրամ | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | I եռամսյակ | | | II եռամսյակ | | | III եռամսյակ | | | IV եռամսյակ | | | Տարի |
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմ. | հոկտեմ. | նոյեմբ. | դեկտ. | |
| Սպիտակի տարածաշրջանի մարզային նեթ.ա/ճան. ձմեռային պահպանություն, ընթացիկ պահ-պանություն | 48351.7 | 10000.0 | 10000.0 | 10000.0 | 22000.0 | 22000.0 | 22000.0 | 41000.0 | 41000.0 | 41000.0 | 48351.7 | 48351.7 | 48351.7 | 48351.7 |
| Այդ թվում՝<br>ձմեռային պահպանություն<br>ընթացիկ պահպանություն | 14110.2<br>34241.5 | 10000.0 | 10000.0 | 10000.0 | 10000.0<br>12000.0 | 10000.0<br>12000.0 | 10000.0<br>12000.0 | 10000.0<br>31000.0 | 10000.0<br>31000.0 | 10000.0<br>31000.0 | 14110.2<br>34241.5 | 14110.2<br>34241.5 | 14110.2<br>34241.5 | 14110.2<br>34241.5 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Լոռու մարզպետարան
ք. Վանաձոր, Հայքի հրապարակ
ՀՎՀՀ 06930769
ՀՀ 900231671026
ՀՀ ՖՆ գանձապետ. համակարգ

Կ.Աշրաֆյան
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Ճանապարհ» ՓԲԸ
ք.Սպիտակ, Տեր-Սիմոնյան 3
ՀՎՀՀ 06800233
Հ/Հ 1930009058700100
«Կոնվերսբանկ» ՓԲԸ , Վանաձորի մ/ճ

Մ.Արղամանյան
Կ.Տ

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հավելված 1

«_02_»_փետրվարի_ 2024թ.
Կնքված N ԼՄ-ՇՀԱՇՁԲ-16/01-2-2024 համաձայնագրի

նախարարության գերատեսչության պետական
կառավարման տարածքային մարմնի անվանումը՝ Լոռու մարզպետարան

Իրականացվող ծրագիրը՝ Սպիտակի տարածաշրջանի մարզային ենթ.ա/ճան ձմեռային պահպ., ընթացիկ պահպանություն:

Բաժին 04, Խումբ 05, Դաս 01

| ը/կ | Ձեզ տրվող աշխատանքի անվանումը | Նախատեսվում է գնել/հազ.դրամ/ | | | | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| | | I եռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ | |
| 1 | Սպիտակի տարած. մարզային ենթակայության ա/ճ ձմեռային պահպանութ., ընթացիկ պահպան. | **10000.0** | **12000.0** | **19000.0** | **7351.7** | **48351.7** |
| | այդ թվում | | | | | |
| | ձմեռային պահպանութ | 10000.0 | - | - | 4110.2 | 14110.2 |
| | ընթացիկ պահպանութ | - | 12000.0 | 19000.0 | 3241.5 | 34241.5 |
| ***Ընդամենը*** | | ***10000.0*** | ***12000.0*** | ***19000.0*** | ***7351.7*** | ***48351.7*** |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Լոռու մարզպետարան
ք. Վանաձոր, Հայքի հրապարակ
ՀՎՀՀ 06930769
ՀՀ 900231671026
ՀՀ ՖՆ գանձապետ. համակարգ

Կ.Աշրաֆյան
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Ճանապարհ» ՓԲԸ
ք.Սպիտակ, Տեր-Սիմոնյան 3
ՀՎՀՀ 06800233
Հ/Հ 1930009058700100
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Վանաձորի մ/ճ

Մ.Արղամանյան
Կ.Տ.

Սպիտակի տարածաշրջանում 2024 թ-ի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը սպասարկման ենթակա ավտոճանապարհներ / ՁԼ N 11/

| Ավտոճանապարհի անվանումը և պիկետաժը | Ավտոճանապարհի տեխնի-կական կարգը | Սպասարկվող հատվածների ընդհանուր երկարությունը /կմ/ | Ճանապարհի առկա վիճակի ծածկագիրը | Սպասարկման պահանջվող մակարդակը | Սպասարկվող հատվածի երկարությունը /կմ/ | Միավորի գինը /հազ.դր./ | Ընդամենը /հազ.դր./ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| **Պահպանման ժամանակաշրջանը՝ ՁՄԵՌ** | | | | | | | |
| S-5-1՝ /Մ-7/ - Շենավան - Արևաշող - /Մ-7/ | մարզային II-IV | 10.4 | | Բավարար | 5.0 | 421.2 | 1,053.0 |
| S-5-3՝ /Մ-7/ (Շիրակամուտ) -Գեղասար - /S-5-7/ | մարզային II-IV | 3.6 | | Բավարար | 1.0 | 421.2 | 421.2 |
| S-5-7՝ /Մ-7/ (Շիրակամուտ) - Լեռնավան (S-5-38) | մարզային II-IV | 7.7 | | Բավարար | 1.1 | 421.2 | 337.0 |
| S-5-23՝ /Մ-3/ - Սարամեջ | մարզային II-IV | 4.3 | | Բավարար | 2.0 | 421.2 | 631.8 |
| S-5-30՝ /Մ-7/ - Սարահարթ - Գոգարան | մարզային II-IV | 6.1 | | Բավարար | 3.5 | 421.2 | 1,474.2 |
| S-5-31՝ /Մ-3/ - Ղուրսալ - Նոր Խաչակապ - /S-5-43/ | մարզային II-IV | 6.9 | | Բավարար | 3.0 | 421.2 | 1,263.6 |
| S-5-32՝ /Մ-7/ - Մեծ Պառնի - Ծաղկաբեր | մարզային II-IV | 6.0 | | Բավարար | 5.0 | 421.2 | 2,106.0 |
| S-5-33՝ /S-5-7/ - Կաթնաջուր - /S-5-32/ | մարզային II-IV | 6.2 | | Բավարար | 3.5 | 421.2 | 1,179.4 |
| S-5-34՝ /Մ-7/ (Լուսաղբյուր) - Խնկոյան | մարզային II-IV | 2.4 | | Բավարար | 2.4 | 421.2 | 1,010.9 |
| S-5-35՝ /Մ-7/ - Հարթագյուղ | մարզային II-IV | 3.3 | | Բավարար | 2.0 | 421.2 | 842.4 |
| S-5-36՝ /Մ-3/ (Սպիտակ) - Նոր Լեռնանցք - Լեռնանցք | մարզային II-IV | 4.5 | | Բավարար | 1.0 | 421.2 | 421.2 |
| S-5-38՝ /Մ-3/ - Ջրաշեն - Լեռնավան | մարզային II-IV | 4.0 | | Բավարար | 3.0 | 421.2 | 1,263.6 |
| S-5-77՝ /Մ-3/ - Քարաձոր | մարզային II-IV | 1.2 | | Բավարար | 1.0 | 421.2 | 421.2 |
| ***Ընդամենը*** | | ***66.6*** | | | ***33.5*** | | **14,110.2** |

| Պահպանման ժամանակաշրջանը՝ ԳԱՐՈՒՆ, ԱՄԱՌ, ԱՇՈՒՆ | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| S-5-1՝ /Մ-7/ - Շենավան - Արևաշող - /Մ-7/ | մարզային II-IV | 10.4 | Լավ SL | Միջին | 3.0 | 1,162.2 | 2,324.4 |
| S-5-3՝ /Մ-7/ (Շիրակամուտ) -Գեղասար - /S-5-7/ | մարզային II-IV | 3.6 | Բավարար SF | Բավարար | 1.0 | 1,162.2 | 1,162.2 |
| S-5-7՝ /Մ-7/ (Շիրակամուտ) - Լեռնավան (S-5-38) | մարզային II-IV | 7.7 | Բավարար SF | Բավարար | 4.96 | 1162.20 | 5759.8 |
| S-5-30՝ /Մ-7/ - Սարահարթ - Գոգարան | մարզային II-IV | 6.1 | Լավ SL | Միջին | 4.5 | 1162.20 | 5229.9 |
| S-5-31՝ /Մ-3/ - Ղուրսալ - Նոր Խաչակապ - /S-5-43/ | մարզային II-IV | 6.9 | Բավարար SF | Բավարար | 3.0 | 1162.20 | 3486.6 |
| S-5-32՝ /Մ-7/ - Մեծ Պառնի - Ծաղկաբեր | մարզային II-IV | 6.0 | Լավ SL | Միջին | 2.30 | 1162.20 | 2673.1 |
| S-5-33՝ /S-5-7/ - Կաթնաջուր - /S-5-32/ | մարզային II-IV | 6.2 | Լավ SL | Միջին | 2.2 | 1162.20 | 2556.8 |
| S-5-34՝ /Մ-7/ (Լուսաղբյուր) - Խնկոյան | մարզային II-IV | 2.4 | Վատ ՏՎ | Թույլատրելի | 2.0 | 585.00 | 1170.0 |
| S-5-35՝ /Մ-7/ - Հարթագյուղ | մարզային II-IV | 3.3 | Լավ SL | Միջին | 3.0 | 1162.20 | 3486.6 |
| S-5-36՝ /Մ-3/ (Սպիտակ) - Նոր Լեռնանցք - Լեռնանցք | մարզային II-IV | 4.5 | Բավարար SF | Բավարար | 2.0 | 1162.20 | 2324.4 |
| S-5-38՝ /Մ-3/ - Ջրաշեն - Լեռնավան | մարզային II-IV | 4.0 | Լավ SL | Միջին | 1.5 | 1162.20 | 1743.3 |
| S-5-77՝ /Մ-3/ - Քարաձոր | մարզային II-IV | 1.2 | Բավարար SF | Բավարար | 1.0 | 1162.20 | 1162.2 |
| ***Ընդամենը՝*** | | ***62.3*** | | | ***30.46*** | | ***34,241.5*** |
| ***Ամբողջը՝*** | | ***128.9*** | | | ***63.96*** | | ***48,351.7*** |